

ՀՀ գլխավոր դատախազի ժամանակավոր
պաշտոնակատար Ա. Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ինչպես հայտնի է, սույն թվականի հուլիսի 17-ին Սասնա ծռեր խմբավորման կողմից ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի շենքը գրավելուց անմիջապես հետո Երևանում տեղի ունեցան բողոքի ակցիաներ ու երթեր՝ ի սատարումն նրանց և նրանց կողմից բարձրացված պահանջների: Ամենօրյա խաղաղ հավաքները ընթանում էին ոստիկանական ուժերի ու քաղաքացիական համազգեստով ինչ-որ անձանց հետ բախումներով, քանզի վերջիններիս կողմից արվում էին ամենինչ, որպեսզի խափանվեն այդ խաղաղ հավաքներն ու երթերը:

Չանգվածային լրատվամիջոցները, հավաքի մասնակիցները և բազմաթիվ իրավապաշտպաններ արձանագրել ենք, որ ՀՀ ոստիկանությունը և այդ քաղաքացիական համազգեստով անձինք, 2016թ. հուլիսի 29-ի երեկոյան ծեծի են ենթարկել խաղաղ հավաքի մասնակիցներին, հարձակումներ իրականացրել խաղաղ հավաքը լուսաբանող լրագրողների վրա, բռնության ենթարկել նրանց հասցնելով մարմնական վնասվածքներ, կոտրել նրանց տեսախցիկները, այսպիսով, խոչընդոտելով նրանց մասնագիտական գործունեությանը (ավելի մանրամասն տես Human Rights Watch-ի հայտարարությունը՝ <https://www.hrw.org/hy/news/2016/08/04/292771>):

Արդեն մի քանի օր է սոցիալական ցանցերում և զանգվածային լրատվական միջոցներով շրջանառվում է այն տեղեկությունը, ըստ որի 2016թ. հուլիսի 29-ի ուշ երեկոյան Երևանի Խորենացի փողոցում և Սարի Թաղում խաղաղ հավաքի մասնակիցների և լրագրողների նկատմամբ բռնություն իրականացրած քաղաքացիական համազգեստով անձանց շարքում են եղել նաև Երևանի քաղաքապետարանի որոշ աշխատակիցներ և ԺԷԿ-ի պետեր: Երևանի քաղաքապետարանի որոշ աշխատակիցների մասնակցության փաստի մասին նյութերը հրապարակվել են www.mamul.am առցանց լրատվական կայքում՝ <http://www.mamul.am/am/news/88733/>, <http://m.mamul.am/am/news/88787>: Բացի այդ, որպես ամբողջական նյութ կարող եք դիտել «Ազատություն ռադիոկայան»-ի և «Ա1+»-ի կողմից այդ օրերին ուղիղ եթեր հեռարձակվող տեսանյութերը, մասնավորապես՝ <http://www.azatutyun.am/a/27889000.html>, <https://www.youtube.com/watch?v=I2geRcDIWUI>: Սակայն, ի զարմանս մեզ, առ այսօր Երևանի քաղաքապետարանը հանդես չի եկել պաշտոնական հայտարարությամբ, չի հերքել կամ չի հաստատել այդ տեղեկությունը կամ որևէ քայլ չի ձեռնարկել այդ անձանց բացահայտելու և պատասխանատվության կանչելու ուղղությամբ:

Ի զարմանս մեզ, ՀՀ ոստիկանության պետ Վ. Գասպարյանն իր օպերատիվ ծառայությունների ղեկավարներին հանձնարարել է հայտնաբերել հուլիսի 29-ի միջադեպի մասնակից քաղաքացիական անձանց, որոնք սադրել են բախումները եւ բռնություն են կիրառել հավաքի մասնակիցների, լրագրողների ու ոստիկանների

նկատմամբ, այն դեպքում, երբ բոլոր լրատվամիջոցներով շրջանառվում են տեսանյութերն ու հրապարակումները, թե ովքեր են եղել այդ սադրիչներն ու բռնարարները:

Փաստորեն խաղաղ հավաքը բռնի ուժով ու առանձնակի դաժանությամբ ցրելու գործընթացում մասնակից են դարձվել ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմնում աշխատող որոշ անձինք, այլ նաև ոստիկանության համակարգի աշխատակիցներ, ովքեր անցել են ոստիկանության կողմը, զինվել այնպիսի առարկաներով, ինչպիսիք են երկաթե ձողերը և օգտագործել ինչ-որ դեղահաբեր (տես Ազատության ռադիոկայանի վերոնշյալ տեսանյութը, որտեղ երևում է, որ ոստիկանության շարքերից դուրս եկող այդ պատկառելի տարիքի տղամարդիկ ինչ-որ դեղահաբեր են ընդունում, այնուհետև դուրս գալիս խաղաղ հավաքի մասնակիցներին ընդառաջ և սկսում իրենց «սև գործը»):

Արդյունքում, Երևանի Սարի Թաղում՝ հոծ բնակեցված թաղամասում, ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառման հետևանքով, խայտառակ բռնությունների, ինչպես նաև իրենց դաժան գործողությունների արդյունքում տուժել են տասնյակ ցուցարարներ և բնակիչներ, մեկ անչափահաս քաղաքացի կորցրել է աչքը, մի քանի քաղաքացիներ ստացել են այրվածքներ, իսկ մի քանի տասնյակ քաղաքացիներ՝ տարբեր աստիճանի վնասվածքներ, պայթուցիկներից մեկը պայթել է բնակիչներից մեկի տանը, որտեղ հրդեհ է բռնկվել, տուժել են անչափահաս երեխաներ (հիվանդանոցներ են տեղափոխվել տարբեր աստիճանի վնասվածքներով և այրվածքներով շուրջ 60 քաղաքացի, ըստ մամուլի հրապարակումների՝ տուժածների մեջ կան նաև մանկահասակ երեխաներ), բերման են ենթարկվել տասնյակից ավելի խաղաղ հավաքի մասնակիցներ և քաղաքական և հասարակական գործիչներ, որոնցից շատերն այսօր զրկված են ազատությունից, իսկ իրական մեղավորները դեռևս գտնվում են ազատության մեջ:

Բացի այդ, ֆեյսբուքի օգտատերերից մեկը՝ Հրանտ Ենոքյանը, ս. թ. օգոստոսի 3-ին գրառում է կատարել այն մասին, որ «հուլիսի 29-ի դեպքերի՝ քաղաքացիների ու լրագրողների ջարդի անմիջական ղեկավարը եղել է տխրահոչակ Լևոն Երանոսյանը՝ Ոստիկանության գործերի հրամանատարը, ինչպես նաև նրա հարազատ եղբայրը՝ գնդապետ Լեոնիկ Երանոսյանը, ով նույնպես բարձր պաշտոն է զբաղեցնում Ոստիկանության գործերում»: Քաղաքացու այս գրառումը տարածվել է զանգվածային լրատվամիջոցներով (<https://web.facebook.com/hrant.enoqyan?rdr>, <http://zham.am/am/news/67713.html>, <http://usarmenianews.com/am-n-4723.html>):

Բացի այդ, Lragir.am կայքի լրագրող Թեհմինե Ենոքյանի կողմից օգոստոսի 5-ին հանցագործության մասին հրապարակային հաղորդում է ներկայացվել ՀՀ ոստիկանությանը, որով հայտնել է, որ քաղաքացիական հագուստով անձանց մեջ ոստիկաններ է հայտնաբերել, ովքեր սադրիչ գործողություններ են իրականացրել և դաժան ծեծի ենթարկել 2016թ. հուլիսի 29-ին Երևանի Սարի Թաղում գտնվող խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ (<https://web.facebook.com/tehmene.yenoqyan?fref=ts>, <http://www.aravot.am/2016/08/05/723914/>):

Իսկ «Հայկական ժամանակ» օրաթերթը, հղում կատարելով Միվիլինթե առցանց կայքի տեսանյութին՝ <https://www.youtube.com/watch?v=gJe8AGK1jlc>, հրապարակել է իրեն

հայտնի դարձած քաղաքացիական հագուստով քաղաքացու տվյալը՝ <http://armtimes.com/hy/read/90950>:

Այսպիսով, մեզ դեռևս հաջողվել է վեր հանել այն տեսանյութերն ու հրապարակումները, որոնք վկայում են այն մասին, որ դեպքի օրը քաղաքացիական հագուստով քաղաքացիների շարքում են եղել թե՛ տեղական մարմնի աշխատակիցներ, թե՛ ոստիկաններ, թե՛ քրեական տարրեր, սակայն սա դեռ ամենը չէ, չի բացառվում նաև, որ այլոք ևս ներգրավված են, ուղղակի անհրաժեշտ է իրավապահ մարմինների գործունե միջամտությունն ու հետևողական քայլերը, որպեսզի հանցագործները բացահայտվեն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն քրեական գործ հարուցելու առիթը կարող է լինել նաև 1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին. 2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները. 3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

Իսկ նույն օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են ընդունվում լրատվության միջոցների հաղորդումները՝ 1. Լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող անցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չհրապարակված հաղորդակցություններում: 2. Հանցագործությունների մասին հաղորդումներ հրապարակված կամ ըստ պատկանելության ուղարկված լրատվության միջոցները, ինչպես նաև այդ հաղորդումների հեղինակները պարտավոր են հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով ներկայացնել հանցագործության մասին հաղորդումը հաստատող՝ իրենց մոտ եղած նյութերը:

Ելնելով վերը շարադրվածից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-179-րդ հոդվածները թույլ են տալիս դատախազությանն իր իրավասության շրջանակում ուսումնասիրել լրատվական միջոցների հրապարակումներն ու նյութերը և քրեական գործ հարուցել, ուստի դիմում եմ Ձեզ այդ խնդրանքով:

Հարգանքով՝

Լևոն Ներսիսյան

Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ
Գործադիր տնօրեն